ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

25.05.2012թ.
169-ի 6

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պարոն Սամվել Նիկոլյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Նիկոլյան,

21.03.2012թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ կայք է ստեղծվել կամ վերամշակվել 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում ՀՀ Ազգային ժողովի համար:
2. 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքի (կայքերի) մշակման (վերամշակման) եւ գործարկման համար ըստ տարիների:
3. Խնդրում ենք տրամադրել ֆինանսավորման աղբյուրները:

ՀՀ Ազգային ժողովից ստացվել է պատասխան, որի համաձայն՝ 2009-2011թ.թ.-ի ընթացքում ՀՀ ԱԺ կայքը 3 անգամ է վերամշակվել. նախ, 2009թ.-ին փոխվել է ՀՀ ԱԺ պաշտոնական կայքի դիզայնը, որի համար Ազգային ժողովը ZOOM GRAPHICS ընկերությանը 100.000 ՀՀ դրամ է վճարել (նշված չէ ֆինանսավորման աղբյուրը): 2010թ.-ին USAID-ի (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող "ՀՀ Ազգային ժողով եւ ԱՄՆ ՄԶԳ համատեղ ծրագրի" շրջանակներում կատարելագործվել է կայքի որոնման համակարգը (նշված չէ ֆինանսավորման չափը): Իսկ 2011թ.-ին ստեղծվել է կայքի ֆրանսերեն տարբերակը, որի թարգմանությունն իրականացվում է Ֆրանկոֆոնայի խորհրդարանական վեհաժողովի "Նորիա" ծրագրի շրջանակներում (նշված չէ ֆինանսավորման չափը):

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողովը մի դեպքում նշել է ֆինանսավորման չափը՝ չնշելով աղբյուրը, 2 դեպքում նշել է ֆինանսավորման աղբյուրը եւ չի նշել չափը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան